ԵԴ1/1188/01/23
(ՀԿԴ/0118/01/24)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2 հուլիսի 2024 թվական ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին փոխարինող Արթուր Պողոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ուսումնասիրելով թիվ ԵԴ1/1188/01/23 (ՀԿԴ/0118/01/24) քրեական գործի ընդդատության մասին վեճը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին Հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի հունիսի 24-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2023 թվականի օգոստոսի 24-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է Ռաիսա Հովհաննեսի Դավոյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով թիվ 59108123 (ԵԴ1/1188/01/23) քրեական վարույթը:

1.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2023 թվականի օգոստոսի 28-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1188/01/23 քրեական վարույթը ստանձնելու և 2023 թվականի սեպտեմբերի 11-ին նախնական դատալսումներ նշանակելու մասին:

1.2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի հունիսի 13-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Հակակոռուպցիոն դատարան փոխանցելու մասին:

2. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի հունիսի 24-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0118/01/24 (ԵԴ1/1188/01/23) քրեական գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության մասին վեճը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի հունիսի 26-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. 2023 թվականի օգոստոսի 8-ի որոշմամբ Ռաիսա Հովհաննեսի Դավոյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա աշխատելով Արմեն Մանուկյանին պատկանող, Թուրքիայի Հանրապետությունից ՀՀ տարբեր ապրանքների ներկրմամբ և մաքսազերծմամբ զբաղվող, Երևան քաղաքի Թումանյան փողոց 9 շենքի թիվ 31 բնակարան հասցեում գործող՝ «Պրոֆ Իմպորտեքս» ՍՊ ընկերությունում և 2009 թվականի փետրվարի 2-ից զբաղեցնելով ընկերության ֆինանսական գծով փոխտնօրենի պաշտոնը, լիազորված լինելով միաժամանակ վարել գանձապահի պարտավորությունները, իր լիազորությունների գործադրմամբ, շահադիտական նպատակներով 2011 թվականից մինչև 2016 թվականն ընկած ժամանակահատվածում մեկ ընդհանուր դիտավորությամբ մաս-մաս կատարել է իրեն վստահված՝ փաստացի տիրապետմանը հանձնված գույքի հափշտակություն՝ Արմեն Մանուկյանից հափշտակելով առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 206.262.717 ՀՀ դրամին համարժեք 460.129 ԱՄՆ դոլար և 10.795 եվրո կանխիկ գումարներ, որպիսի հանցավոր գործողությունները դրսևորվել են հետևյալում.*

Այսպես՝

Ռաֆայել Հովհաննեսի Դավոյանը, «Պրոֆ Իմպրուվեքս» ՍՊ ընկերության տնօրեն Արմեն Սուրենի Մանուկյանի հետ 2009 թվականի փետրվարի 2-ին կնքված թիվ 2 աշխատանքային պայմանագրի համաձայն նշանակվել է ընկերության ֆինանսական գծով փոխտնօրենի պաշտոնում: Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ միաժամանակ Ռաֆայել Դավոյանի աշխատանքում ներառվել է գանձապահի պարտավորությունների կատարումը: «Պրոֆ Իմպրուվեքս» ՍՊ ընկերությունում գործող կարգի համաձայն՝ Ռաֆայել Դավոյանը ընկերության հաճախորդներից Երևան քաղաքի Թումանյան փողոց 9 շենքի թիվ 31 բնակարան հասցեում գտնվող ընկերության գրասենյակում ստացել է հաճախորդների կողմից Թուրքիայի Հանրապետությունում գնումների համար նախատեսված գումարները, ովքեր Թուրքիայի Հանրապետություն մուտք գործելուց նույն չափով առձեռն գումարներ են ստացել Արմեն Մանուկյանի՝ Թուրքիայի Հանրապետությունում գտնվող աշխատակից Մարկոս Ղամոյանից, ով էլ հաճախորդներին փաստաթղթի տրված և իրեն վստահված գումարների վերաբերյալ համապատասխան գրառումներ է կատարել ներքին շրջանառության փաստաթղթերի հանդիսացող իր նոթատետրում: Ռաֆայել Դավոյանը, օգտվելով Արմեն Մանուկյանի՝ իր հանդեպ ունեցած վստահությունից, հաճախորդների կողմից իրեն փոխանցված գումարների չափի վերաբերյալ իր նոթատետրում կատարել է ոչ ճիշտ թվային գրառումներ, այն է՝ հաճախորդից ստացած և իրեն վստահված իրական գումարի փոխարեն, օգտագործելով ֆինանսական գծով փոխտնօրեն լինելու և հաճախորդներից ստացած գումարը որոշ ժամանակ տնօրինելու լիազորությունը, նոթատետրում նշել է փաստաթղթի ստացած գումարից ավելի քիչ գումար, այդ կերպ կոնկրետ փաստերը ձևախեղելու եղանակով դիտավորությամբ խեղաթյուրել իրականությունը և նոթատետրում «ցույց տրված» գումարի չափով գումար փոխանցել Արմեն Մանուկյանին, ով իր ստորագրությամբ հաստատել է տվյալ գումարը Ռաֆայել Դավոյանից ստանալու հանգամանքը և գումարի չափի վերաբերյալ նշում է կատարել իր անձնական օգտագործման համակարգչում: Ռաֆայել Դավոյանը, շարունակելով իր հանցավոր գործողությունները, հեռախոսակապով Մարկոս Ղամոյանին հայտնել է հաճախորդից վերցված իրական գումարի չափը, որն էլ փաստաթղթի տվյալ հաճախորդը ստացել է Թուրքիայի Հանրապետությունում:

Դրանից հետո Ռաֆսա Դավոյանը տնօրեն Արմեն Մանուկյանից գաղտնի, վերջինիս բացակայության ժամանակ, մուրք է գործել նրա աշխատասենյակ և գումարի իրական չափի վերաբերյալ փոփոխված տվյալները մուտքագրել համակարգչում՝ միաժամանակ դրան համապատասխան կրկնագծման եղանակով գումարի չափը փոփոխելով նաև իր նոթատետրում: Նշված ժամանակահատվածում, մասնավորապես՝ 15.08.2013 թվականին Ռաֆսա Դավոյանը 7.000.000 ՀՀ դրամով գնել է 2007 թվականի արտադրության «Տոյոտա Ռաֆ 4» մակնիշի ավտոմեքենա: Հիշյալ հանգամանքը, հաշվի առնելով Ռաֆսա Դավոյանի ֆինանսական դրությունը և վերջինիս կողմից ստացած աշխատավարձի չափը, կասկածելի է թվացել Արմեն Մանուկյանին, ով ուսումնասիրելով ընկերության հաճախորդների պարտքերի ցուցակը, հայտնաբերել է 25.000 ԱՄՆ դոլարի անճշտություն: Վերոնշյալ մեխանիզմով Ռաֆսա Դավոյանը 2011 թվականից 2013 թվականների ընթացքում Արմեն Մանուկյանից մեկ ընդհանուր դիտավորությամբ մաս-մաս, շահադիտական նպատակներով, օգտագործելով իրեն վստահված գույքը որոշ ժամանակ տնօրինելու լիազորությունը, մաս-մաս հափշտակել է ընդհանուր առանձնապես խոշոր չափերի՝ 9.088.000 ՀՀ դրամին համարժեք 25.000 ԱՄՆ դոլար կանխիկ գումար:

Բացի այդ, Ռաֆսա Հովհաննեսի Դավոյանը, հանդիսանալով «Պրոֆ Իմպրուվեքս» ՍՊ ընկերության ֆինանսական գծով փոխտնօրենը և լիազորված լինելով միաժամանակ կատարել գանձապահի պարտականությունները, իր լիազորությունների գործադրմամբ, շահադիտական նպատակներով, տեղյակ լինելով Արմեն Մանուկյանի՝ ՀՀ-ից բացակայելու հանգամանքի մասին, 2012 թվականի ապրիլի 9-ին ընկերոջ՝ Ռոբերտ Պապանյանի խնդրանքով, Երևան քաղաքի Թումանյան փողոց 9 շենքի թիվ 31 բնակարան հասցեում գործող՝ «Պրոֆ Իմպրուվեքս» ՍՊ ընկերության դրամարկղից հափշտակել է փաստացի իր տիրապետմանը հանձնված՝ 27.379.800 ՀՀ դրամ գումարին համարժեք 70.000 ԱՄՆ դոլար կանխիկ գումար, որն առձեռն փոխանցել է Ռոբերտ Պապանյանին:

Շարունակելով իր հանցավոր վարքագիծը՝ 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի մայիսի 6-ն ընկած ժամանակահատվածում, հանդիսանալով «Պրոֆ Իմպրուվեքս» ՍՊ ընկերության ֆինանսական գծով փոխտնօրենը և լիազորված լինելով միաժամանակ վարել գանձապահի պարտականությունները, կրկին

վերոնշյալ մեխանիզմով «Պրոֆ Իմպրուվեքս» ՍՊ ընկերության հաճախորդներից ընկերության նույն հասցեի գրասենյակում ստացել է հաճախորդների կողմից Թուրքիայի Հանրապետությունում գնումների համար նախատեսված գումարները, ովքեր Թուրքիայի Հանրապետություն մուտք գործելուց նույն չափով գումարներ են ստացել Արմեն Մանուկյանի՝ Թուրքիայի Հանրապետությունում գտնվող աշխատակից Մարկոս Ղամոյանից, կրկին Արմեն Մանուկյանին իրական գումարի չափից քիչ գումար փոխանցելով, այնուհետև իր նոթատետրում կրկնագծումներ կատարելով և Արմեն Մանուկյանի համակարգչում գումարի չափերը փոփոխելով, նշված ժամանակահատվածում մեկ ընդհանուր դիտավորությամբ մաս-մաս շահադիտական նպատակներով, օգտագործելով իրեն վստահված գույքը որոշ ժամանակ տնօրինելու լիազորությունը Արմեն Մանուկյանից հափշտակել է առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 169.794.917 ՀՀ դրամին համարժեք 365.129 ԱՄՆ դոլար և 10.795 եվրո կանխիկ գումար: (…)»[1]:

5. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի հունիսի 13-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Այսպիսով, Ռաիսա Դավոյանին առաջադրված մեղադրանքի բովանդակությունից տեսանելի է, որ նա իրեն մեղսագրվող արարքը ենթադրաբար կատարել է օգտագործելով «Պրոֆ իմպրուվեքս» ընկերությունում զբաղեցրած՝ ֆինանսական գծով փոխտնօրենի և գանձապահի պաշտոնները՝ գործադրելով իրեն վերապահված լիազորությունները: Այսինքն, Ռ.Դավոյանը գործել է ի պաշտոնե իրեն վերապահված ծառայողական հատուկ լիազորությունների շրջանակներում, որոնք վերապահված են եղել միայն իրեն և որոնք դրսևորվել են իրենից ծառայողական ենթակայության տակ չգտնվող անձանց նկատմամբ սահմանված կարգով կարգադրիչ լիազորությունները կամ ծառայողական լիազորությունները կամ ծառայողական դիրքից բխող հեղինակությունն օգտագործելով: Հետևաբար, Դատարանը գտնում է, որ թիվ ԵԴ1/1188/01/23 քրեական գործն ըստ մեղադրանքի Ռաիսա Հովհաննեսի Դավոյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, ըստ ընդդատության պետք է փոխանցել ՀՀ հակակոռուպցիոն դատարան (…)»*[2]:

---

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 9, թերթեր 257-259:
[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 11, թերթեր 123-133:

6. Հակակոռուպցիոն դատարանը 2024 թվականի հունիսի 24-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Դատարանը, ուսումնասիրելով քրեական գործի նյութերը, գտնում է, որ թիվ ՀԿԴ/0118/01/24 քրեական գործն ընդդատյա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին և այն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածով սահմանված կարգով պետք է ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին՝ ընդդատության մասին վեճը լուծելու համար:*

(…)

Սույն դեպքում մեղադրյալի նկատմամբ թեև հանրային քրեական հետապնդումը հարուցվել է 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, սակայն մեղսագրված ենթադրյալ հանցավոր արարքն ավարտվել է 2016 թվականի մայիսի 6-ին, այսինքն՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի գործողության ժամանակ:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 6-ի համաձայն՝ կոռուպցիոն հանցագործություն է համարվում 179-րդ հոդվածով նախատեսված յուրացման կամ վատնման այն տեսակը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով:

Դատարանի գնահատմամբ՝ նշվածն ուղղակի վկայում է, որ պաշտոնեական դիրքն օգտագործել ասելով պետք է հասկանալ այնպիսի արարքի կատարում, որը բխում է պաշտոնատար անձի լիազորություններից, որոնք սահմանվում են համապատասխան օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով: Ուստի պաշտոնեական դիրքն օգտագործելով կատարված վատնման սուբյեկտը հատուկ է, այն կարող է կատարվել բացառապես պաշտոնատար անձի կողմից՝ իր պաշտոնեական լիազորությունների կամ զբաղեցրած պաշտոնի հեղինակության օգտագործմամբ:

Սույն դեպքում, թիվ ՀԿԴ/0118/01/24 քրեական գործով մեղադրյալ Ռաֆսա Դավոյանը չի հանդիսացել պաշտոնատար անձ, քանի որ չի իրականացրել մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի կամ պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև Հայաստանի

Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ զորքերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ, այլ հանդիսացել է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության աշխատակից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիվ ՀԿԴ/0118/01/24 քրեական գործով մեղադրյալը մեղսագրվող ենթադրյալ արարքների կատարման պահին չի հանդիսացել պաշտոնատար անձ, այլ հանդիսացել է «Պրոֆ Իմպրուվեքս» ՍՊ ընկերության փոխտնօրենը, ուստի 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածով նախատեսված ենթադրյալ հանցագործությունները չէին կարող կատարվել պատոնատար անձի կողմից պաշտոնական դիրքն օգտագործելով, ինչը վկայում է, որ սույն քրեական գործով առկա չէ կոռուպցիոն հանցագործություն և քրեական գործն ընդդատյա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:

Հարկ է արձանագրել նաև, որ մեղադրյալ Ռաֆսա Դավոյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին 2023 թվականի օգոստոսի 8-ի որոշման մեջ որևէ արձանագրում չկա, որ նա իրեն մեղսագրված հանցանքը կատարել է «պաշտոնական դիրքն օգտագործելով»:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ մեղադրյալ Ռաֆսա Դավոյանին մեղսագրված ենթադրյալ հանցավոր արարքի կատարման պահին գործող 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքով հավելված 6-ն առկա չի եղել, հետևաբար մեղադրյալին մեղսագրված ենթադրյալ հանցանքը չէր էլ կարող սահմանվել որպես կոռուպցիոն:

Ռաֆսա Դավոյանի նկատմամբ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին քննիչի 2023 թվականի օգոստոսի միջնորդության համաձայն՝ Քննիչը Ռաֆսա Դավոյանին վերագրվող արարքի սանկցիայով պայմանավորված գտել է, որ վերջինիս արարքները պետք է քննարկվեն 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի համատեքստում:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածը համապատասխանում է ՀՀ քրեական գործող օրենսգրքի 256-րդ հոդվածին, որի պայմաններում վստահված գույքը հափշտակելը կոռուպցիոն հանցագործություն է համարվում, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, ապա այդ ծանրացնող հանգամանքը չի կարող վերաբերելի լինել Ռաֆսա Դավոյանին: Այսպես՝ Դատարանն «իշխանական կամ ծառայողական լիազորություններ» հասկացությունները վերլուծության ենթարկելն առարկայազուրկ է համարում, քանի որ մեղսագրվող արարքները կատարելու պահին որպես հանցակազմը ծանրացնող և ըստ այդմ՝ կոռուպցիոն հանցանք դարձնող հանգամանք հանդիսացել է բացառապես պաշտոնական դիրքն օգտագործելով կատարված վատնումը, որն ինչպես նշվել է, վերաբերել է միայն պաշտոնատար անձանց: Հետևաբար, եթե նոր՝ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ից գործող ՀՀ քրեական օրենսգրքով կոռուպցիոն հանցագործություն է համարվում նաև մասնավոր ընկերության աշխատակիցների կողմից իրենց ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով հափշտակություն կատարելը, ապա միևնույնն է, այդ հանգամանքը չի կարող մեղսագրվել սույն գործով մեղադրյալներին, քանի որ ինչպես նշվել է՝ արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով, իսկ արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքին հետադարձ ուժ տալն արգելվում է (…)»[3]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 11, թերթեր 143-148:

ԵԴ1/1188/01/23 (ՀԿԴ/0118/01/24) քրեական վարույթն ընդդատյա չէ Հակակոռուպցիոն դատարանին:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]:

10. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. «*(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա*

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[6]*:*

11. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել՝ իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցելիս, չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, և պետք է հաշվի առնվի նաև արդարադատության շահը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատալսումների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

12. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը որոշում է կայացրել վարույթն ըստ ընդդատության Հակակոռուպցիոն դատարան փոխանցելու մասին՝ փաստելով, որ Ռ.Դավոյանին ներկայացված մեղադրանքի բովանդակությունից երևում է, որ վերջինս ենթադրյալ արարքը կատարել է «Պրոֆ իմպրոտեքս» ընկերությունում զբաղեցրած ֆինանսական գծով փոխտնօրենի և գանձապահի պաշտոններով իրեն վերապահված լիազորություններն օգտագործելու եղանակով[7]:

- Հակակոռուպցիոն դատարանը, փաստելով, որ մեղադրյալը մեղսագրվող ենթադրյալ արարքի կատարման պահին չի հանդիսացել պաշտոնատար անձ, գտել է, որ վերջինս ենթադրյալ հանցագործությունը չէր կարող կատարել պաշտոնեական դիրքն օգտագործելով:

Հակակոռուպցիոն դատարանն արձանագրել է նաև, որ մեղադրյալի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման բովանդակությունից չի բխում, որ վերջինս ենթադրյալ հանցանքը կատարել է պաշտոնեական դիրքն օգտագործելու եղանակով[8]:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ մեղադրյալ Ռ.Դավոյանին ներկայացված մեղադրանքի ձևակերպումից պարզ է դառնում, որ վերջինս, աշխատելով Ա.Մանուկյանին պատկանող, Թուրքիայի Հանրապետությունից ՀՀ տարբեր ապրանքների ներկրմամբ և մաքսազերծմամբ զբաղվող «Պրոֆ Իմպրոտեքս» ՍՊ ընկերությունում և 2009 թվականի փետրվարի 2-ից զբաղեցնելով ընկերության ֆինանսական գծով փոխտնօրենի պաշտոնը, **լիազորված լինելով միաժամանակ վարել գանձապահի պարտավորությունները**, **իր լիազորությունների գործադրմամբ**, շահադիտական նպատակներով, **իրեն**

---

[7] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

վստահված գույքը որոշ ժամանակ տնօրինելու լիազորությունն օգտագործելով, ենթադրաբար կատարել է իրեն վստահված գույքի առանձնապես խոշոր չափերի հափշտակություն:

Այլ կերպ՝ Ռ.Դավոյանը իրեն վստահված գույքի հափշտակությունն իրականացրել է՝ օգտագործելով ընկերության ֆինանսական գծով փոխտնօրենի և գանձապահի՝ իրեն վերապահված լիազորությունները, որպիսի ենթադրյալ արարքն իր բնույթով կոռուպցիոն է: Հետևաբար, գտնում ենք, որ առկա է սույն վարույթը Հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա լինելու հիմքը:

14. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/1188/01/23 (ՀԿԴ/0118/01/24) քրեական վարույթն ընդդատյա չէ Հակակոռուպցիոն դատարանին, հիմնավոր չէ:

15. Վերոգրյալի հիման վրա և ելնելով արդարադատության շահի պաշտպանության անհրաժեշտությունից, գտնում ենք, որ թիվ ԵԴ1/1188/01/23 (ՀԿԴ/0118/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Ռաիսա Հովհաննեսի Դավոյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով թիվ ԵԴ1/1188/01/23 (ՀԿԴ/0118/01/24) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՐԹՈՒՐ ՊՈՂՈՍՅԱՆ	ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ